ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՍՅՈՒԶԱՆՆԱ ՎԱՐԴԳԵՍԻ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ԿԱԹԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԼՈՒԾՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ (ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՕՐԻՆԱԿՈՎ)

Ը.00.02 - <<Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում>> մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ - 2016

Ատենախոսության թեման հաստատվել է Հայաստանի ազգային ագրարային համալսարանում:

Գիտական ղեկավար՝ տնտեսագիտության դոկտոր
ՀՐԱՉՅԱ ՍԵՐԳԵՅԻ
ԾՊՆԵՑՅԱՆ

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ տնտեսագիտության դոկտոր
ՀԵՆՐԻԿ ՄԿՐՏՉԻ
ՄԱՄԻԿՈՆՅԱՆ

տնտեսագիտության թեկնածու,
դոցենտ ՄԱՔՍԻՄ ԱՎԱՆԵՍԻ
ԴԱՆԻԵԼՅԱՆ

Առաջատար կազմակերպություն՝ ՀՀ ԳԱԱ Մ.ՔՈԹԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ
ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Ատենախոսության հրապարակային պաշտպանությունը կայանալու է 2016 թվականի փետրվարի 23 - ին, ժամը 16^{00}-ին՝ Հայաստանի ազգային ագրարային համալսարանում գործող ՀՀ ԲՈՀ-ի տնտեսագիտության 002 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցեն՝ 0009, Երևան, Տերյան փող., 74:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Հայաստանի ազգային ագրարային համալսարանի գիտական գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2016 թվականի հունվարի 22-ին:

022 Մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար, դոցենտ Վ. Ս. Ալեքսանյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

<u>Հետազոտության թեմայի արդիականությունը</u>: Ուսումնասիրված թեմայի արդիականությունը պայմանավորված է գյուղատնտեսական մթերքներից մեկի՝ կաթի, որպես պարենային ապահովության կարևորագույն բաղադրիչի, արտադրության արդյունավետության բարձրացման հիմնախնդիրների և դրանց լուծման ուղիների բացահայտման անհրաժեշտությամբ: Անասնաբուծական մթերքների կառուցվածքում չնայած կաթն ունի բավականին մեծ մասնաբաժին, սակայն հանրապետությունում բնակչության մեկ շնչի հաշվով սպառվող կաթի և կաթնամթերքի ծավալները զգալիորեն զիջում են գոյություն ունեցող ֆիզիոլոգիական և առողջապահական նորմաներից: ՀՀ ազգային պարենային հաշվեկշռի միջին տվյալներով՝ մեկ շնչի հաշվով տարեկան սպառված կաթ-կաթնամթերքների ծավալները 1.5 անգամ զիջում են պարենային սպառողական զամբյուղի հաշվարկման համար առաջարկված ծավալներին: Կենդանական ծագման պարենամթերքների մեջ կաթնամթերքների օգտագործումը գրավում է կենտրոնական տեղ: Նվազագույն պարենային զամբյուղի կառուցվածքում նրան բաժին է ընկնում էներգածախսի 14 և կենդանական ծագման էներգառեսուրսների 54 %-ը[1]:

Հանրապետությունում 2014թ. հունվարի 1-ի դրությամբ գյուղատնտեսական կենդանիների գլխաքանակի ցուցանիշները՝ համեմատած 1990թ. հետ, մանր եղջերավորների համար կրճատվել է 1.7 անգամ, իսկ խոշոր եղջերավորների գլխաքանակն ավելացել է 5.9%-ով, այդ թվում՝ կովերի գլխաքանակի աճը առավել մեծ է եղել:

Հանրապետությունում կաթի արտադրության բնագավառում առաջատար է համարվում ՀՀ Շիրակի մարզը: Վերջին 5 տարիների միջին տվյալներով հանրապետությունում արտադրված կաթի գրեթե 1/6 մասը բաժին է ընկել ՀՀ Շիրակի մարզին:

Դիտարկումները ցույց են տալիս, որ կաթի արտադրության ծավալների ավելացման հետ մեկտեղ, էական դրական տեղեշարժեր չեն գրանցվել կաթի ապրանքայնության մակարդակի բարձրացման, գների կայունության, արտադրության արդյունավետության բարձրացման ուղղությամբ:

Նշվածի հետ մեկտեղ խնդիրներ կան տեղական արտադրության հաշվին կաթ-կաթնամթերքի պահանջարկի ապահովվման ուղղությամբ: ՀՀ ազգային պարենային հաշվեկշռի վերջին երեք տարիների միջին տվյալներով կաթին և կաթնամթերքին բաժին է ընկել սպառված էներգետիկ արժեքի ավելի քան 9.0 %-ը և կաթի ինքնաբավության մակարդակը կազմել է գրեթե 84.0 %[2]:

---

[1]Գրիգորյան Կ.Ա. Պարենային անվտանգության ապահովման և աղքատության նվազեցման խնդիրների լուծման ուղիները ՀՀ-ում, Եր.: ՀՊԱՀ, 2011.- էջ 158

[2] Պարենային ապահովություն և աղքատություն 2014թ. հունվար-դեկտեմբեր, ՀՀ ԱՎԾ, Երևան 2015. - էջ 67-75

Ներկայացված տվյալները վկայում են, որ հանրապետությունում կաթի և կաթնամթերքի պահանջարկի զգալի (շուրջ 1/6) մասը դեռևս ապահովվում է ներմուծման հաշվին: Այստեղից ակնհայտ է, որ կարևոր հիմնախնդիր է սեփական արտադրության հաշվին կաթի և կաթնամթերքի պահանջարկի ապահովումը:

Ստեղծված իրավիճակը վկայում է, որ կաթի արտադրության ծավալների ավելացման և արդյունավետության բարձրացման ուղղությամբ առկա են բազմաթիվ խնդիրներ, որոնք իրենց լուծումն են պահանջում:

Հանրապետությունում և ուսումնասիրվող ՀՀ Շիրակի մարզում կաթի արտադրության արդյունավետության բարձրացման խնդիրների բացահայտումն ու դրանց լուծման ուղիների առաջադրումը պահանջում է կաթի արտադրության, իրացման, սպառման և այլ բնագավառում ստեղծված իրավիճակի համակողմանի ուսումնասիրության արդյունքում մշակել միջոցառումներ ուղղված կաթի արտադրության արդյունավետության բարձրացմանն ու արտադրության ծավալների ավելացմանը: Նշվածն էլ պայմանավորել է ուսումնասիրվող թեմայի արդիականությունը և բխում է անասնապահության զարգացման ու երկրի պարենային ապահովության խնդրի լուծման անհրաժեշտությունից:

<u>Հետազոտության նպատակը և խնդիրները</u>: Հետազոտության նպատակն է հանրապետության և ուսումնասիրվող ՀՀ Շիրակի մարզի կաթնային անասնապահության վիճակի ուսումնասիրման հիման վրա՝ կաթի արտադրության արդյունավետության բարձրացման խնդիրների բացահայտումը և դրանց լուծման ուղիների առաջադրումը: Նշված նպատակի լուծմանն է ուղղվում հետևյալ խնդիրները.

- ուսումնասիրել կաթնային անասնապահության արդյունավետության տեսական հարցերը, Հայաստանի Հանրապետությունում կաթի արտադրության վիճակը և զարգացման միտումները,
- ուսումնասիրել ՀՀ Շիրակի մարզի կաթի շուկայի վիճակն ու առանձնահատկությունները, գնահատել մարզի դերը կաթի արտադրության բնագավառում,
- գնահատել կաթի արտադրության արդյունավետության բարձրացման առանձին գործոնների ազդեցությունը,
- վերլուծել դաշտային կերարտադրության վիճակը և նախանշել զարգացման հիմնական ուղղությունները,
- մշակել կաթի արտադրության արդյունավետության բարձրացման հիմնական ուղղությունները:

<u>Հետազոտության առարկան և օբյեկտը</u>: Կաթի արտադրության արդյունավետության բարձրացման խնդիրների առավել համակողմանի վերլուծության և հիմնավորված առաջարկությունների մշակման համար ուսումնասիրությունների օբյեկտ են հանդիսացել Շիրակի մարզի կաթնային անասնապահության վիճակը և ծառացած խնդիրները: Հետազոտության առարկան կաթի արտադրության արդյունավետության բարձրացման խնդիրների ու դրանց լուծման ուղիների բացահայտումն է:

<u>Հետազոտության տեսական, մեթոդաբանական և տեղեկատվական հիմքերը:</u> Ատենախոսության ուսումնասիրության տեսական հիմք են հանդիսացել ժամանակակից տնտեսագետ գիտնականների աշխատությունները, հրապարակումները, ագրոպարենային համակարգի գործունեության տարբեր կողմերը կարգավորող իրավա-օրենսդրական փաստաթղթերը: Ատենախոսության տեղեկատվական հիմքը՝ ՀՀ ազգային վիճակագրական ծառայության, ՀՀ գյուղատնտեսության նախարարության, հանրապետությունում գործող տարբեր կազմակերպությունների կողմից հրատարակված տեղեկատվական-վերլուծական նյութերն են:

Հետազոտության ընթացքում կիրառվել են վիճակագրական և տրամաբանական, համեմատական ու գործոնային վերլուծություններ, ծրագրանպատակային մոտեցումներ, գրաֆիկական գնահատումներ, հարցում-հետազոտություններ և այլ մեթոդներ:

<u>Հետազոտության գիտական նորույթը և հիմնական արդյունքները:</u> Հանրապետությունում և ուսումնասիրվող մարզում կաթնային անասնապահության վիճակի համակողմանի ուսումնասիրությունների հիման վրա առաջադրվել են կաթի արտադրության արդյունավետության բարձրացման խնդիրների լուծման ուղիները: Հիմնական գիտական արդյունքները պայմանավորված են հետազոտության շրջանակներում առաջադրված խնդիրներով, մասնավորապես.

- գնահատվել են ՀՀ Շիրակի մարզում կաթի արտադրության արդյունավետությունը պայմանավորող գործոնները և դրանց ազդեցության չափը,
- մշակվել են ՀՀ Շիրակի մարզում կերարտադրության զարգացման հիմնական ուղղությունները՝ ընդգրկելով կերային մշակաբույսերի սերմնաբուծության և սերմապահովության, ցանքատարածությունների կառուցվածքի բարելավման, ագրոտեխնիկական միջոցառումների պահպանման, բնական կերահանդակների համակարգված օգտագործման խնդիրները,
- մշակվել են կաթի արտադրության արդյունավետության բարձրացման հիմնական ուղղությունները՝ պայմանավորված մասնավորապես, կովերի մթերատվության բարձրացմամբ, դրանց կերակրման, տոհմային գործի կազմակերպման, պահվածքի պայմանների բարելավմամբ,
- մշակվել են կաթի ապրանքայնության մակարդակի բարձրացման և իրացման խնդիրների լուծման հիմնական ուղղությունները, առաջարկվել են կաթի իրացման կառուցակարգեր՝ գնահատելով դրանց ներդրման արդյունավետությունը:

<u>Հետազոտության տեսական ու գործնական նշանակությունը:</u> Ատենախոսության արդյունքներն ունեն տեսական և կիրառական նշանակություն, մասնավորապես այնպիսի հիմնախնդիրների լուծման գործում, որոնք վերաբերում են անասնաբուծական կարևորագույն մթերքի՝ կաթի արտադրության արդյունավետության, երկրի պարենային անվտանգության մակարդակի բարձրացմանը: Ատենախոսությունում տրվել են նաև գիտագործնական նշանակություն ունեցող

առաջարկություններ, ընդհանուր առմամբ, ուղղված անասնաբուծության ճյուղի, գործունեության բարելավմանն ու զարգացմանը: Տրված առաջարկությունները կարող են օգտակար լինել ագրոպարենային համակարգի հետազոտվող բնագավառում քաղաքականություն մշակող և իրականացվող, պետական ու տարածքային կառավարման մարմինների, ինչպես նաև ատենախոսության թեմային առնչվող՝ գիտահետազոտական ուսումնասիրությունների և ուսումնական նպատակների համար:

<u>Հետազոտական արդյունքների փորձարկումը և հրապարակումները</u>: Ատենախոսության հիմնական դրույթները քննարկվել են Հայաստանի ազգային ագրարային համալսարանի Ագրոարդյունաբերական համալիրի էկոնոմիկայի, Ագրոբիզնեսի կառավարման և Ագրոբիզնեսի կազմակերպման ամբիոնների համատեղ նիստում:

Ատենախոսության հիմնական արդյունքները հրապարակվել են հեղինակի վեց գիտական հոդվածներում:

<u>Ատենախոսության ծավալը և կառուցվածքը</u>: Ատենախոսությունը բաղկացած է առաջաբանից, երեք գլուխներից, եզրակացություններից, օգտագործած գրականության ցանկից և հավելվածներից:

Ատենախոսության ծավալը կազմում է 175 էջ՝ ներառյալ օգտագործած գրականության ցանկը: Աշխատությունում ներկայացված է 38 աղյուսակ և 13 գծապատկեր:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածությունում հիմնավորվել է թեմայի արդիականությունը, ներկայացված են հետազոտության նպատակը, օբյեկտը, տեսական, մեթոդաբանական և տեղեկատվական հիմքերը, գիտական նորույթն ու գործնական նշանակությունը:

Ատենախոսության առաջին՝ <<Կաթի արտադրության արդյունավետության գնահատման տեսական դրույթները, Հայաստանի Հանրապետությունում կաթի արտադրության վիճակը և իրացման շուկան>> գլխում ուսումնասիրվել է կաթնային անասնապահության արդյունավետության էությունը, դրա վրա ազդող գործոնների դասակարգումը, հանրապետությունում կաթի արտադրության վիճակը և միտումները, ՀՀ Շիրակի մարզի բնատնտեսական պայմանները, դերն ու առանձնահատկությունները կաթի արտադրության բնագավառում, հանրապետությունում կաթի շուկայի վիճակն ու դրա առանձնահատկությունները ուսումնասիրվող մարզում:

Կաթնային անասնաբուծությունում <<արդյունավետություն>> կատեգորիան արտացոլում է ռեսուրսային, տնտեսական, կազմակերպական, գիտական-տեխնիկական, սոցիալական համակարգերի օգտագործումը և մի շարք այլ պայմանների՝ արտադրողական ուժերի զարգացման և արտադրական հարաբերությունների ազդեցությունը, հաշվի առնելով ենթաճյուղերի գործունեության յուրահատկությունները, վերարտադրողական գործընթացը և շուկայական պահանջները:

Կաթնային անասնապահության արդյունավետության վրա ազդում է փոխկապակցված գործոնների մի ամբողջ համակարգ, աշխատանքում այն տարանջատվել է՝ ռեսուրսային, ինովացիոն, տնտեսական, կազմակերպական, իրավական, սոցիալական, բնապահպանական: Գյուղատնտեսական կազմակերպությունների համար կարևորվել է արդյունավետության մակարդակի չորս խմբերի բաշխումը՝ տեխնոլոգիական, տնտեսական, սոցիալական և բնապահպանական:

Անասնապահությունը կարևոր դեր ունի երկրի տնտեսական կառուցվածքում: Ճյուղի արտադրանքը գյուղատնտեսության համախառն արտադրանքի նշանակալի մաս է կազմում, և անասնաբուծական մթերքների՝ կաթի, մսի աղբյուր են հանդիսանում:

Հանրապետության գյուղատնտեսության համախառն արտադրանքում անասնաբուծության ճյուղի և կաթի համախառն արտադրանքի արժեքի մասին պատկերացում է տալիս 1-ին աղյուսակի տվյալները: Դիտարկված ժամանակահատվածի (2007-2013թթ.) միջին տվյալներով, անասնաբուծությանը բաժին է ընկնում հանրապետության գյուղատնտեսության համախառն արտադրանքի 37.6 %-ը, իսկ կաթի արտադրությանը՝ անասնաբուծության արտադրանքի արժեքի՝ 29.9%-ը: Դիտարկվող ժամանակահատվածի 2007-2011թթ. հատվածում անասնաբուծության տեսակարար կշիռը ունեցել է աճի միտում, հաջորդող երկու տարիներին այն նվազել է և 2013թ. կազմել 37.7 %:

Կաթի արտադրության ծավալների դինամիկայի ըստ հանրապետության մարզերի ուսումնասիրությունը (աղյուսակում 2) վկայում է, որ Հայաստանի Հանրապետությունում կաթի արտադրությունում առաջատար դեր ունի Գեղարքունիքի մարզը, որին դիտարկվող ժամանակահատվածի վեջին բաժին է ընկել կաթի համախառն արտադրանքի 18.4%-ը, այնուհետև մեծ բաժնեմաս ունեն ուսումնասիրվող Շիրակի, ինչպես նաև Լոռու և Արագածոտնի մարզերը, որոնց տեսակարար

կշիռը կաթի արտադրությունում համապատասխանաբար կազմել է՝ 16.4, 12.4 և 12.2%: Նշված չորս մարզերին բաժին է ընկնում կաթի համախառն արտադրանքի 59.4%: Դիտարկված ժամանակահատվածում կաթի համախառն արտադրանքը հանրապետությունում ավելացել է 48.7 %-ով, իսկ ՀՀ Շիրակի մարզում աճը կազմել է 83.6 % և կազմել 107.6 հազ. տոննա:

Աղյուսակ 1

ՀՀ գյուղատնտեսության, բուսաբուծության, անասնաբուծության և կաթի համախառն արտադրանքի արժեքներն ու տեսակարար կշիռները ըստ՝ 2007-2013 թթ.[3,4,5]

Ցուցանիշների անվանումը	2007թ.		2008թ.		2009թ.		2010թ.		2011թ.		2012 թ.		2013 թ.		2007-2013 թթ. միջինը	
	Համախառն արտադրանք, մլրդ դրամ	%	Համախառն արտադրանք, մլրդ դրամ	%	Համախառնարտադրանք, մլրդ դրամ	%	Համախառն արտադրանք, մլրդ դրամ	%	Համախառն արտադրանք, մլրդ դրամ	%	Համախառն արտադրանք, մլրդ դրամ	%	Համախառն արտադրանք, մլրդ դրամ	%	Համախառն արտադրանք, մլրդ դրամ	%
Ընդամենը գյուղատնտեսություն	633.9	100.0	628.1	100.0	552.1	100.0	636.7	100.0	795	100.0	840.4	100.0	919.1	100.0	715.0	100.0
այդ թվում՝ բուսաբուծություն	429.9	67.8	405.9	64.6	346.7	62.8	392.7	61.7	465.1	58.5	511.5	60.9	572.8	62.3	446.4	62.4
Անասնաբուծություն	204	32.2	222.2	35.4	205.4	37.2	244	38.3	329.9	41.5	328.9	39.1	346.3	37.7	268.6	37.6
Կաթի արտադրություն	71.8	-	76.1	-	64.6	-	68.5	-	98.0	-	88.4	-	95.3	-	80.4	
Կաթի արտադրության տեսակարար կշիռը գյուղատնտեսության համախառն արտադրանքում	-	11.3	-	12.1	-	11.7	-	10.8	-	12.3	-	10.5	-	10.4	-	11.2
Կաթի արտադրության տեսակարար կշիռը անասնաբուծության համախառն արտադրանքում	-	35.2	-	34.3	-	31.5	-	28.1	-	29.7	-	26.9	-	27.6	-	29.9

[3] Հայաստանի վիճակագրան տարեգիրք 2011թ., ՀՀ ԱՎԾ, Երևան 2012թ. էջ 291: Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2013թ., ՀՀ ԱՎԾ, Երևան 2014թ., էջ 34-38, 63-65

[4] Պարենային ապահովություն և աղքատութուն 2014 թ. հունվար – դեկտեմբեր, ՀՀ ԱՎԾ, Երևան 2014 թ., էջ 34-38, 63-65

[5] Պարենային ապահովություն և աղքատություն 2011թ. հունվար-դեկտեմբեր, ՀՀ ԱՎԾ, Երևան 2012թ. էջ 33; 63: ՀՀ սոցիալ – տնտեսական վիճակը 2007, 2008, 2009, 2010, 2011, 2012, 2013թթ հունվար - դեկտեմբեր: ՀՀ ԱՎԾ, Երևան 2008, 2009, 2010, 2011, 2012, 2013 և 2014թթ.

Աղյուսակ 2

Հայաստանի Հանրապետությունում կաթի համախառն արտադրությունը ըստ մարզերի 1990-2013թթ.[6,7,8,]

(հազար տոննա)

ՀՀ մարզերը	1990թ.	1991-1995թթ. միջինը	1996-2000թթ. միջինը	2001-2005թթ. միջինը	2006-2008թթ. միջինը	2009թ.	2010թ.	2011թ.	2012թ.	2013 թ.
Արագածոտն	49.5	46.9	51.7	60.7	74.0	77.1	74.1	74.8	76.5	79.9
Արարատ	32.9	30.3	32.2	38.9	48.0	41.0	38.1	36.5	38.2	40.1
Արմավիր	34.9	32.3	32.5	34.2	41.5	39.8	36.1	36.1	37.4	40.5
Գեղարքունիք	69.9	64.8	73.8	93.2	113.9	116.4	112.4	114.5	116.3	120.7
Լոռի	56.4	53.1	55.4	61.3	75.7	77.8	77.1	76.2	77.7	81.3
Կոտայք	39.6	37.2	40.7	52.6	66.0	54.6	51.3	51.8	53.5	57.9
Շիրակ	**58.6**	**54.3**	**59.5**	**76.9**	**95.8**	**97.5**	**99.0**	**98.8**	**101.5**	**107.6**
Սյունիք	41.7	38.5	40.0	44.8	54.4	59.7	55.8	55.9	57.2	62.2
Վայոց Ձոր	20.2	18.1	20.1	20.8	24.2	17.3	19.9	20.0	21.1	24.8
Տավուշ	32.9	30.3	33.2	36.9	44.4	32.4	34.8	34.9	36.6	39.5
Ք. Երևան	5.4	3.7	3.3	3.4	3.5	2.1	2.3	2.0	2.2	2.5
Ընդամենը ՀՀ-ում	441.9	409.5	442.5	523.7	641.4	615.7	600.9	601.5	618.2	657.0

[6]Գյուղատնտեսությունը Հայաստանի Հանրապետությունում 1990-1999թթ., ՀՀ ԱՎԾ, Երևան 2001թ. էջ 132, Գյուղատնտեսությունը Հայաստանի Հանրապետությունում 2000-2005թթ., ՀՀ ԱՎԾ, Երևան 2006թ. էջ 131, Պարենային ապահովություն և աղքատություն, 2010թ. հունվար-մարտ, ՀՀ ԱՎԾ, Երևան 2011թ. էջ 57-58

[7]Պարենային ապահովություն և աղքատություն, ՀՀ ԱՎԾ, Երևան 2013թ., էջ 63-64

[8]ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2013թ. հունվար-դեկտեմբերին, ՀՀ ԱՎԾ, Երևան 2014թ., էջ 19

Հետազոտվող մարզի դերը կաթի արտադրության բնագավառում դիտարկելու նպատակով, ուսումնասիրվել է հանրապետության և ՀՀ Շիրակի մարզի գյուղատնտեսության, բուսաբուծության և անասնաբուծության ճյուղի, կաթի համախառն արտադրանքների արժեքների և վերջիններիս տեսակարար կշիռների փոփոխությունը (աղյուսակ 3):

Աղյուսակ 3

ՀՀ և Շիրակի մարզի գյուղատնտեսության համախառն արտադրանքի արժեքի և դրանում կաթի տեսակարար կշռի ցուցանիշների ժամանակագրական փոփոխությունը 2007-2013թթ. տվյալներով[9,10]

Ցուցանիշներ	2007թ.	2008թ.	2009թ.	2010թ.	2011թ.	2012թ.	2013թ.	2007-2013 թթ. միջինը
ՀՀ գյուղատնտեսության համախառն արտադրանքը, մլրդ. դրամ	633.9	628.1	552.1	636.7	795.0	841.5	919.1	715.2
Շիրակի մարզի գյուղատնտեսության համախառն արտադրանքը, մլրդ. դրամ	64.0	63.4	55.8	71.3	93.0	94.0	106.3	78.3
Շիրակի մարզի տեսակարար կշիռը հանրապետության մեջ, %	10.1	10.1	10.1	11.2	11.7	11.2	11.6	10.9
Շիրակի մարզի բուսաբուծության համախառն արտադրանքը, մլրդ դրամ	36.7	36.4	26.9	35.9	44.9	47.8	57.9	40.9
Շիրակի մարզի անասնաբուծության համախառն արտադրանքը, մլրդ դրամ	27.3	27.0	28.9	35.2	48.1	46.2	48.4	37.3
Շիրակի մարզում կաթի համախառն արտադրանքը, մլրդ. դրամ	10.7	11.1	10.9	11.1	11.1	14.5	15.6	12.1
Կաթի արտադրության տեսակարար կշիռը մարզի գյուղատնտեսու-	16.8	17.5	19.6	15.5	12.2	15.4	14.7	15.4

[9] Հաշվարկների համար հիմք է ընդունվել՝ ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2007; 2008; 2009; 2010, 2011, 2012, 2013թթ. հունվար-դեկտեմբերին: ՀՀ ԱՎԾ: Երևան 2008; 2009; 2010; 2011, 2012, 2013 և 2014թթ. տեղեկատվական ամսական զեկույցի տվյալները

[10] ՀՀ մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2014: ՀՀ ԱՎԾ: Երևան 2014թ., էջ 39

թյան համախառն արտադրանքում, %								
Կաթի արտադրության տեսակարար կշիռը մարզի անասնապահու-թյան համախառն րտա-դրանքում, %	39.3	41.0	46.0	36.5	28.7	31.4	32.2	32.4

Աղյուսակում ներկայացված տվյալներից երևում է, որ ՀՀ Շիրակի մարզի գյուղատնտեսության համախառն արտադրանքի արժեքը դիտարկված ժամանակահատվածում հանրապետության գյուղատնտեսության համախառն արտադրանքի մեջ տատանվել է 10.1-11.7 %-ի սահմաններում և 2007-2013թթ. միջին տվյալներով կազմել է 10.9 %: Կաթի համախառն արտադրանքի արժեքը դիտարկվող ժամանակահատվածի վերջում կազմել է 15.6 մլրդ. դրամ, որի մասնաբաժինը մարզի գյուղատնտեսության համախառն արտադրանքում կազմել է 14.7 %, իսկ անասնաբուծության համախառն արտադրանքում՝ 32.2 %: Ընդ որում դիտարկվող ժամանակահատվածի (2007–2013թթ) միջին տվյալներով այդ ցուցանիշները համապատասխանաբար կազմել են՝ 15.4 և 32.4 %:

Կաթի համախառն արտադրանքն ուսումնասիրվող մարզի գյուղատնտեսության համախառն արտադրանքում տատանվել է 12.2-19.6 %-ի, իսկ անասնապահության համախառն արտադրանքում՝ 32.2-46.0%-ի միջակայքում: Դիտարկվող ժամանակահատվածի վերջին տարում կաթի արտադրության տեսակարար կշիռը 2007-2010թթ. նկատմամբ որոշակիորեն նվազել է:

Կաթի արտադրության արդյունավետության բարձրացման գործում կարևորելով ապրանքայնության մակարդակի բարձրացումը, անհրաժեշտ ենք համարել դիտարկել հանրապետությունում և ուսումնասիրվող մարզում կաթի արտադրության և ապրանքային արտադրանքի ծավալների փոփոխությունը (աղյուսակ 4):

Աղյուսակ 4

ՀՀ-ում և Շիրակի մարզում կաթի արտադրության և ապրանքային արտադրանքի ծավալի փոփոխությունը 2007-2013թթ.[11,12]

հազ. տոննա

Ցուցանիշներ	Չափի միա-վոր	2007	2008	2009	2010	2011	2012	2013	2013թ. 2007թ. նկատ-մամբ, %
1	2	3	4	5	6	7	8	9	10
Շիրակի մարզ									
Կաթի համախառն արտադրանք	հազ. տ	95,8	98,9	97,5	99,0	98,8	101,5	107,6	112,3
Կաթի ապրան-քայնության մակարդակը	%	48,3	40,5	68,0	47,2	48,2	46,3	52,9	109,5
Ապրանքային կաթի ծավալը	հազ. տ	46,3	40,1	66,3	46,7	47,6	47,0	56,9	122,9

Աղյուսակ 4-ի շարունակությունը

1	2	3	4	5	6	7	8	9	10
Հայաստանի Հանրապետությունում									
Կաթի համախառն արտադրանք	հազ. տ	641,2	661,9	615,7	600,9	601,5	618,2	657,0	102,5
Ապրանքային կաթի ծավալը	հազ. տ	341,8	298,5	283,2	296,8	309,2	315,9	358,7	104,9
Շիրակի մարզի տեսակարար կշիռը ՀՀ կաթի համախառն ար-տադրությունում	%	14,9	14,9	15,8	16,5	16,4	16,4	16,4	աճը 1,5 տոկոս ային կետ
Շիրակի մարզի տեսակարար կշիռը ՀՀ ապ-րանքային կաթի ծավալում	%	13,5	13,4	23,4	15,7	15,4	15,9	15,9	աճը 2,4 տոկոս ային կետ

[11] Պարենային ապահովություն և աղքատություն, 2011 թ. հունվար - դեկտեմբեր, ՀՀ ԱՎԾ, Երևան 2012, էջ 63: Պարենային ապահովություն և աղքատություն, 2014թ. հունվար - դեկտեմբեր, ՀՀ ԱՎԾ, Երևան 2015, էջ 63

[12] Գյուղատնտեսական մթերքների իրացումը (օգտագործումը) գյուղացիական տնտեսությունների կողմից 2008թ., 2010թ., 2012թ. և 2013թ., ՀՀ ԱՎԾ, Երևան 2009թ., 2011թ., 2013թ., 2014թ. էջ 4

Հանրապետությունում կաթի արտադրության, դրա առաջարկի և վերջինիս փոփոխության միտումների ուսումնասիրությունը ցույց է տալիս որ դիտարկվող ժամանակահատվածում կաթի առաջարկը (ապրանքային արտադրանքը) որոշակիորեն տատանվել է, այն գտնվել է 283.2-358.7 հազ. տոննայի միջակայքում: Ներկայացված տվյալները վկայում են ապրանքային արտադրանքի՝ կաթի առաջարկի չափազանց դանդաղ աճի մասին, որը կաթի արտադրության արդյունավետության բարձրացման խոչընդոտող գործոններից մեկն է:

Ներկայացված տվյալներից երևում է, որ Շիրակի մարզում կաթի արտադրության ծավալները որոշակիորեն տատանվել է և 2013թ. կազմել է 107.6 հազ. տոննա, որը գերազանցում է 2007թ. մակարդակը 12.3 %-ով, այն դեպքում երբ հանրապետության կտրվածքով կաթի արտադրության ծավալը ավելացել է 2.5%-ով:

Շիրակի մարզի ապրանքային կաթի տեսակարար կշիռը հանրապետության ապրանքային կաթի մեջ 2013 թ. կազմել է 15,9 % 2007թ. 13,5 %-ի դիմաց:

Հանրապետությունում և ուսումնասիրվող մարզում ապրանքային կաթի ծավալների 2007-2013թթ. ցուցանիշների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրանք որոշակիորեն տատանվել են: Ընդ որում կաթի առաջարկի ավելացման ուղղությամբ առկա է դրական տեղաշարժեր, սակայն կաթի ապրանքայնության մակարդակը զգալիորեն ցածր է, որն էլ այլ գործոնների հետ պայմանավորում է նաև կաթի դեռևս ցածր արդյունավետությունը:

Կարևորելով կաթի ապրանքայնության մակարդակի բարձրացման խնդիրը, անհրաժեշտ ենք համարել կաթի իրացման հիմնական ուղղությունների ուսումնասիրումը (գծապատկեր 1): ՈՒսումնասիրությունների համար հիմք է ընդունվել սեփական դիտարկումները, ՀՀ ԱՎԾ-ի տվյալները:



Գծապատկեր 1: Կաթի իրացման հիմնական ուղղությունների սխեմատիկ պատկերը

Հանրապետության և Շիրակի մարզի գյուղացիական տնտեսությունների կողմից կաթի իրացման կառուցվածքը բնորոշող 2009-2013թթ. տվյալները ներկայացված են 5-րդ աղյուսակում: Դիտարկված տվյալներից ակնհայտ է, որ կաթի ապրանքայնության մակարդակը ինչպես հանրապետությունում, այնպես էլ՝ Շիրակի մարզում զգալիորեն ցածր է: Ուսումնասիրվող մթերքի զգալի մասը սպառվում է տնտեսությունում, ինչպես անձնական կարիքների բավարարման, այնպես էլ որոշ մասը արտադրական սպառման համար, ինչպես նաև վերամշակվում է տնտեսություններում:

Աղյուսակ 5

Գյուղացիական տնտեսությունների կողմից կաթի և կաթնամթերքի (վերածած կաթի) իրացման կառուցվածքը ՀՀ-ում և ՀՀ Շիրակի մարզում 2009-2013թթ.[13]

(արտադրության ծավալի նկատմամբ, %)

ՀՀ և Շիրակի մարզ	Տարե-թվերը	Գյուղացիական տնտեսությունների կողմից					մնացորդը տնտեսությունում
		վաճառվել է	տրվել է ապրանքա-փոխանակման դիմաց	տրվել է բնամթերքով ծա-ռայությունների դիմաց	օգտագործվել է տնտեսությունում	դրանից վերամշակվել է	
Հայաստանի Հանրապե-տություն	2009	41.0	4.4	0.6	35.7	77.8	18.3
	2010	44.7	4.3	0.4	41.4	71.6	9.2
	2011	46.6	4.3	0.5	41.2	65.7	7.4
	2012	45.1	5.4	0.6	42.1	68.5	6.8
	2013	44.7	9.1	0.8	42.0	69.7	3.4
Շիրակի մարզ	2009	62.6	3.5	1.9	16.2	97.5	15.8
	2010	42.1	4.6	0.5	43.5	79.3	9.3
	2011	42.9	4.7	0.5	26.9	57.1	3.1
	2012	43.6	2.2	0.5	45.0	67.2	2.5
	2013	49.7	3.0	0.2	41.4	75.7	5.7

Հաշվի առնելով կաթի արտադրության արդյունավետության գործընթացում գնի կարևորությունը՝ ուսումնասիրվել է վերջին տարիներին հանրապետությունում կաթի գների փոփոխությունը: Ընդ որում դիտարկվել է ինչպես մանրածախ գները, այնպես էլ գյուղացիական տնտեսությունների կողմից իրացման գները: Գների փոփոխությունն ուսումնասիրվել է վերջին 7 տարիների՝ 2007-2013 թթ. համար: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ կաթի մանրածախ գները ուսումնասիրվող ժամանակահատվածում ունեցել են աճի միտում: Սակայն գյուղացիական տնտեսությունների կողմից իրացման գների փոփոխությունը դրան համաչափ է կատարվել:

Կատարված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ կաթի ինչպես մանրածախ, այնպես էլ գյուղացիական տնտեսությունների կողմից իրացման գները

[13] Գյուղատնտեսական մթերքի իրացումը (օգտագործումը) գյուղացիական տնտեսությունների կողմից 2009, 2010, 2011, 2012, 2013 թվականներին: Վիճակագրական տեղեկագրեր, ՀՀ ԱՎԾ, Երևան 2010թ., 2011թ., 2012թ., 2013թ., 2014թ., էջ 8

տարվա ընթացքում նկատելիորեն փոփոխվում են: Հետևաբար ուսումնասիրել ենք նաև կաթի գների փոփոխությունը ըստ եռամսյակների, որի արդյունքները ներկայացված է գծապատկեր 2-ում: Ներկայացված տվյալները վկայում են, որ գյուղացիական տնտեսությունների կողմից կաթի իրացման գնի որոշակի նվազումը չի բերել կաթի մանրածախ գնի համապատասխան նվազեցման, այն հիմնականում վերաբերվում է 2012թ. III եռամսյակին, ինչպես նաև 2013թ. II և III եռամսյակների ցուցանիշներին: Դիտարկված համամասնությունը խոսում է կաթնամթերք արտադրողների կողմից գների պարտադրման և շահույթների ոչ արդարացի բաշխման վերաբերյալ:

Աշխատանքի շրջանակներում կատարված ուսումնասիրությունների և կաթ արտադրող ու իրացնող սուբյեկտների հետ հարցումներով բացահայտվել է կաթի գների վրա ազդող հիմնական գործոնները:



Գծապատկեր 2: Գյուղացիական տնտեսությունների կողմից կաթի իրացման և մանրածախ գների փոփոխությունը 2012թ. և 2013թ. ըստ եռամսյակների

<u>Ատենախոսության երկրորդ՝ <<Կաթի արտադրության արդյունավետության բարձրացման խնդիրները>> գլխում</u> ուսումնասիրվել է կաթնային անասնապահությունում ծառացած խնդիրները և դրա առանձնահատկությունները ՀՀ Շիրակի մարզում, կաթի արտադրության արդյունավետության բարձրացումն պայմանավորող կերարտադրության խնդիրները, ուսումնասիրվող մարզի օրինակով կաթի արտադրության վրա ազդող գործոնների քանակական գնահատականը:

Կատարված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ կաթնային անասնապահության խնդիրները բազմազան են, դրանք պայմանավորված են տարբեր գործոններով, սկսած կաթնային անասանապահությունում օգտագործվող ռեսուրսների ապահովումից, ներառյալ կերարտադրությունն ու կերապահովումը, բնական կերահանդակների օգտագործումը, կենդանիների տոհմային ու մթերատու

հատկանիշների բարելավումը, արտադրության գործընթացի կազմակերպումը, կաթի նախնական վերամշակումը և իրացման գործընթացի կազմակերպումը:

Դիտարկումները ցույց են տալիս, որ կաթի արտադրությունից մինչև սպառողը շղթայի օղակներում անհրաժեշտ է իրականացնել մի շարք աշխատանքներ, պահպանել որոշակի տեխնոլոգիական, տնտեսական պահանջներ, որոնք հնարավոր է իրականացնել համապատասխան կարողությունների և ենթակառուցվածքների միջոցով: Հանրապետությունում և ուսումնասիրվող ՀՀ Շիրակի մարզում այդ կարողությունների առկայության և գործունեության ուղղությամբ կատարված դիտարկումները թույլ են տվել գնահատել դրանց տարածական բաշխումը և ապահովվածությունը:

Հանրապետությունում և ուսումնասիրվող ՀՀ Շիրակի մարզում այդ կարողությունների առկայության և գործունեության վիճակի ուսումնասիրություններից բացահայտվել է, որ դրանց ապահովվածության մակարդակը չափազանց ցածր է:

Կաթի հավաքման հնարավորություններով, վերամշակող կարողություններով ապահովվածության մակարդակի բարձրացումը հանդիսանում է կաթի ապրանքայնության մակարդակի բարձրացման, կաթնային անասնապահության արդյունավետության բարձրացման, անասնապահական տնտեսությունների եկամուտների ավելացման կարևորագույն նախադրյալներից մեկը:

Կատարված ուսումնասիրությունները հնարավորություն են տվել բացահայտել կաթ արտադրողից սպառող ապրանքային շարժի շղթայում ստեղծված վիճակն ու հարաբերությունները: Մասնավորապես, կատարված ուսումնասիրություններով գնահատել է ՀՀ Շիրակի մարզում կաթի արտադրության արդյունավետության բարձրացումը պայմանավորող՝ իրացմանը խոչընդոտող խնդիրները (մասնավորապես՝ ապրանքային կաթի փոքր քանակությունները, կաթի նախնական մշակման պահպանության դժվարությունները, անասնապահական տնտեսությունների և կաթ սպառողների զգալի հեռավորությունները, կաթի հումքի շուկայում չկանոնակարգված միջնորդների առկայությունը, արտադրողների և կաթի իրացման սուբյեկտների միջև փոխշահավետ պայմանագրային հարաբերությունների ձևավորման անբավարար վիճակը և այլն):

Աշխատանքի երկրորդ գլխում անդրադարձել ենք նաև կաթի արտադրության արդյունավետությունը պայմանավորող կերարտադրության խնդիրներին:

Կերարտադրության հիմնական աղբյուրը հանդիսանում է դաշտային կերարտադրությունը:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Շիրակի մարզում տնտեսական բարեփոխումների սկզբին հաջորդող ժամանակահատվածում կերային մշակաբույսերի ցանքատարածքներում տեղի է ունեցել ինչպես քանակական, այնպես էլ՝ որակական մեծ փոփոխություններ:

Տարածքների կրճատման հետ մեկտեղ վատթարացել է մշակաբույսերի ցանքատարածությունների կառուցվածքը: Կերային մշակաբույսերի ցանքատարածությունների կառուցվածքում ներկայումս գերակշռում է բազմամյա խոտերի անցյալ տարիների ցանքը, որի տեսակարար կշիռը 2013թ. տվյալներով կազմում է 70.86%: Չի մշակվում սիլոսային մշակաբույսերը, չափազանց փոքր տեսակարար կշիռ ունի սիլոսացու եգիպտացորենը:

Դաշտային կերարտադրության բնագավառում ստեղծված իրավիճակը հանդիսանում է ինչպես հանրապետության, այնպես էլ Շիրակի մարզի անասնապահության զարգացման խոչընդոտող գործոններից մեկը:

Աշխատանքի շրջանակներում դաշտային կերարտադրության բնագավառում հեռանկարային մոտեցումներ ձևավորելու համար, ելակետներ ունենալու նկատառուներով, անդրադարձել ենք նաև վերջին տասնամյակում Շիրակի մարզում կերային մշակաբույսերի արտադրության ծավալների և բերքատվության մակարդակի փոփոխության միտումներին:

Ուսումնասիրությունները վկայում են, որ մարզի կերարտադրության խնդիրների լուծումը պահանջում են դաշտային կերարտադրության կառուցվածքի բարելավումն, ինչպես նաև կերային մշակաբույսերի մշակության ագրոտեխնիկական պահանջների կատարման ապահովում:

Աշխատանքի երկրորդ գլխում դիտարկվել է նաև ուսումնասիրվող մարզի օրինակով կաթի արտադրության վրա ազդող գործոնների քանակական գնահատմանը:

Շիրակի մարզում անասնապահության ճյուղի որոշ հիմնական ցուցանիշների վրա կաթի գնման գնի և կաթի համախառն արտադրանքի ազդեցության ուսումնասիրումը որոշակիորեն հիմք է հանդիսացել կաթի արտադրության արդյունավետության բարձրացման խնդիրների բացահայտման և դրանց լուծման ուղիների կանխորոշման համար: Մասնավորապես՝ ուսումնասիրվող մարզում 2000-2013թթ. կաթի արտադրության վիճակի վերլուծության և գնահատման համար կարևորվել է կաթի ապրանքայնության մակարդակի, ինչպես նաև գյուղատնտեսական տնտեսություններից մեկ լիտր կաթի գնման գնի ու կաթի արտադրության ծավալների միջև ֆունկցիոնալ կապի որոշումը[14]:

Կաթի ապրանքայնության մակարդակի վրա մեկ լիտր կաթի գնման գնի և կաթի համախառն արտադրանքի ազդեցությունը գնահատելու համար կառուցվել է բազմակի ռեգրեսիոն մոդել, որի արդյունքները ներկայացված են 6-րդ աղյուսակում:

Աղյուսակ 6

Ռեգրեսիոն վերլուծության արդյունքները

Ցուցանիշներ	Արդյունքները
Մոդելի տեսքը	$\hat{y}_{3t} = 21.57 - 0.179y_{1t} + 0.493y_{2t}$
Կոռելյացիայի գործակիցը	$R = 0.555$
Դետերմինացիայի գործակիցը	$R^2 = 0.308$ կամ 30,8%

[14] Abrahamyan S.V., Quantitative assessmentn of factors influencing milk production in Shirak region of the republic of Armenia // Ереван, Известия НАУА №3, 2014.-p. 97-102

Համաձայն կառուցված ռեգրեսիոն մոդելի՝ ուսումնասիրվող տարիներին մեկ լիտր կաթի գնման գնի յուրաքանչյուր մեկ դրամով թանկացումը հանգեցրել է կաթի ապրանքայնության մակարդակի շուրջ 0.179%-ով կրճատմանը, իսկ կաթի համախառն արտադրանքի յուրաքանչյուր 1000 տոննայով ավելացման հետ զուգահեռ կաթի ապրանքայնության մակարդակը բարձրացել է 0.493%-ով:

Մոդելում ընդգրկված գործոնների միջև առկա է միջին ուժգնությամբ կապ ($R = 0.555$), իսկ կաթի ապրանքայնության մակարդակի տատանումների միայն 30.8%-ն է պայմանավորված մոդելում ընդգրկված գործոնների համատեղ տատանումներով, իսկ մնացած 69.2%-ը պայմանավորված է այլ և պատահական գործոններով:

<u>Աշխատանքի երրորդ՝ ◻Կաթի արտադրության արդյունավետության բարձրացման ուղիները Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզում◻ գլխում</u> ուսումնասիրվել են կաթի արտադրության արդյունավետության բարձրացումը պայմանավորող կերարտադրության զարգացման, տոհմային գործի, կերակրման պայմանների, բնական կերահանդակների օգտահործման բարելավման, կաթի ապրանքայնության բարձրացման և իրացման խնդիրների լուծման հիմնական ուղղությունները:

Կատարված ուսումնասիրությունները հնարավորություն են տվել առաջադրել դաշտային կերարտադրության տնտեսական արդյունավետության բարձրացումը պայմանավորող ագրոտեխնիկական խնդիրների լուծման հիմնական ուղղությունները: Աշխատանքում առաջադրվել է կերային մշակաբույսերի արտադրության արդյունավետության բարձրացման միջոցառումներ հետևյալ ուղղություններով՝ բերքատվության բարձրացման, մշակաբույսերի կառուցվածքի բարելավման, ցանքի, մշակության, բերքահավաքի, պահպանության, հետբերքահավաքային մշակության, կերային մշակաբույսերի բերքահավաքի և կերերի պահպանման գործընթացում անհրաժեշտ ագրոտեխնիկական պահանջների պահպանման և այլն:

Ելակետ ունենալով կերային մշակաբույսերի նախկին և ներկայիս ցանքատարածությունները, անասնապահական մթերքների նկատմամբ ներկայիս պահանջարկը և գլխաքանակի ավելացման անհրաժեշտությունը՝ կանխատեսվել են Շիրակի մարզում կերային մշակաբույսերի ցանքատարածությունները, բերքատվությունը և համախառն բերքը 2015-2020թթ. համար:

Աշխատանքում ուսումնասիրվող մարզում կերային մշակաբույսերի նախանշված ծավալներին կարելի է հասնել միայն որոշակի նպաստող լծակների կիրառման արդյունքում, դրանցից կարող են լինել կերային մշակաբույսերի ցանքերի համար սուբսիդավորումը, մատչելի նպատակային վարկերը և այլն:

Հիմք ունենալով Շիրակի մարզի կերային մշակաբույսերի արտադրության ծավալների կանխատեսվող ցուցանիշները, ինչպես նաև խոտհարքներից և չօգ-

տագործվող վարելահողերից խոտի սպասվող ծավալները, անասնակերի համար օգտագործվող այլ հնարավոր աղբյուրները, կանխատեսել ենք խոշոր և մանր եղջերավորների գլխաքանակը:

Հաշվարկների համաձայն խոշոր եղջերավորների գլխաքանակը 2020թ. կանխատեսվում է 140.4 հազ. գլուխ, որից կովեր 68.0 հազ. գլուխ: Վերջիններս գերազանցում են 2014թ. հունվարի 1-ի ցուցանիշը, համապատասխանաբար 31.1 և 34.4%-ով: Կանխատեսվող ժամանակահատվածի վերջում մանր եղջերավորների գլխաքանակը կազմում է 139.3 հազ. գլուխ, 2014թ. հունվարի 1-ի ցուցանիշի նկատմամն աճը կազմում է 54.7%-ով:

Աշխատանքում անդրադարձ է արվել տոհմային գործի, կերակրման պայմանների, բնական կերահանդակների օգտագործման բարելավման միջոցով կաթի արտադրության արդյունավետության բարձրացման ուղղություններին:

Հաշվի առնելով կաթի արտադրության արդյունավետության բարձրացման համար կերաբաժնի կարևորությունը առաջարկվել է կովերի նորմավորված կերաբաժնի տարբերակներ: Մասնավորապես՝ այդ ենթադրում է կերաբաժնի կառուցվածքում ընդհանուր սննդարարության մեջ կոպիտ կերերի՝ 30-35, հյութալի կերերի՝ 40-45, համակցված կերի՝ 30-20 պարունակություն, մինչդեռ Շիրակի մարզում և հանրապետության համայնքների մեծ մասում կովերի կերաբաժնի՝ 70-75%-ը կազմում են կոպիտ կերերը:

Կաթի արտադրության արդյունավետության բարձրացման առանցքային գործոններից է անասնապահության զարգացման համար լավագույն պայմանների ստեղծումը: Նշվածը առաջին հերթին վերաբերում է բնական կերահանդակների լիարժեք և համակարգված օգտագործմանը, անհրաժեշտ ծավալներով և որակական հատկանիշներով դաշտային կերարտադրության ապահովմանը, կաթի հավաքման և պահպանման կարողությունների ձևավորմանը, կաթի վերամշակման կարողությունների ստեղծմանը, անասնաբուժական սպասարկման վիճակի բարելավմանը, կենդանիների տոհմային հատկանիշների բարելավման ուղղությամբ աշխատանքների իրականացմանը, մասնագիտացված խորհրդատվության ապահովմանը և այլն: Նշված աշխատանքների կազմակերպումը հնարվոր է տնտեսավարման կոոպերատիվ ձևի արմատավորման և կարողությունների ընդլայնման ճանապարհով: Անասնապահության, մասնավորապես կաթի արտադրության արդյունավետության բարձրացման վերը նշված պայմանների ապահովմանն է ուղղված Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականցվող □Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության□ վարկային ծրագիրը, որը ներառում է Շիրակի մարզի 18 գյուղական համայնքներ: Անասնապահության զարգացումը, մասնավորապես կաթի արտադրության արդյունավետության բարձրացումը, պահանջում է ուսումնասիրվող մարզի մյուս համայնքներում նման ուղղվածության ծրագրերի իրականացում, մասնավորապես

ծրագրի եկրորդ փուլում (նոր ծրագրում) ընդգրկելով մարզի հնարավորինս շատ համայնքներ: Վերջինս կաթի արտադրության արդյունավետ կազմակերպման գործընթացի հետ մեկտեղ ապահովում է արտադրողից մինչև սպառումը շղթայի բոլոր օղակների համակարգված գործունեությունը:

Կաթի արտադրության արդյունավետության բարձրացման համար կարևորվում է նաև նախրի կառուցվածքի բարելավումը՝ այն համալրելով տոհմային և մթերատու հատկանիշներ ունեցող տավարով: Վերջինիս իրականացումը անասնապահությունում տնտեսավարողների ներկայիս վճարունակության պայմաններում իրատեսական է համարվում որոշակի աջակցության մեխանիզմների կիրառման պայմաններում:

Աշխատանքի եզրափակիչ գլխում անդրադարձել ենք նաև կաթի ապրանքայնության բարձրացման և իրացման խնդիրների լուծման հիմնական ուղղություններին:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ կաթի, որպես որոշակի առանձնահատկություններ ունեցող արտադրանք, իրացման գործընթացը երաշխավորված և փոխշահավետ սկզբունքներով կազմակերպումը իրատեսական է համարվում պայմանագրային հարաբերությունների ձևավորման միջոցով:

Միջազգային փորձի ուսումնասիրությունը, ինչպես նաև հանրապետությունում և ուսումնասիրվող մարզում դիտարկումները ցույց են տալիս, որ անասնապահական տնտեսությունների և կաթնամթերք արտադրող ընկերությունների տնտեսական հարաբերությունների առավել հիմնավորված ձև է կաթի հավաքման և իրացման գործառույթ ունեցող կոոպերատիվի ստեղծումը և այդ կառույցի միջոցով կաթնամթերք իրացնող կազմակերպությունների հետ հումքի մթերման իրականացումը: Այս գործընթացն արդյունավետ և սահմանված չափանիշներին համապատասխան իրականացնելու համար չափազանց կարևոր է ստեղծվող կոոպերատիվները կաթի հավաքման, պաղեցման ագրեգատներով հագեցումը: Կոոպերատիվների ձևավորման սկզբնական ժամանակահատվածում ֆինանսական սուղ հնարավորություններից ելնելով նպատակահարմար է համարվում կաթի հավաքման և պաղեցման ագրեգատները կոոպերատիվներին մատչելի պայմաններով, մասնավորապես՝ լիզինգային և նմանատիպ այլ մեխանիզմներով տրամադրումը:

Կաթնամթերքի հումքը արտադրողից մինչև սպառողը ապրանքային շարժի առաջարկվող սխեման ներկայացված է 3-րդ գծապատկերում:



Գծապատկեր 3. Անասնապահական տնտեսություններից կոոպերատիվների միջոցով կաթը կաթնամթերք արտադրող կազմակերպություններին մատակարարման և վերջիններիս կողմից կաթնամթերքի իրացման սխեման

Կատարված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ կաթ արտադրող-սպառող շղթայում կարևոր է համարվում կաթի նախնական մշակման տեխնոլոգիական խնդիրների լուծումը: Աշխատանքում անդրադարձ է արվել նաև տվյալ խնդիրներին:

Մեր կողմից կատարված ուսումնասիրությունները ցույց են տվել, որ Շիրակի մարզի գյուղական համայնքների բացարձակ գերակշռող մասը չունեն ինչպես կաթի վերամշակման կարողություններ, այնպես էլ կաթի հավաքման կետեր, այսպես ընդհանուր առմամբ կատարված ուսումնասիրությունները ցույց է տվել, որ ուսումնասիրվող մարզում առկա է թվով 18 կաթի հավաքման կարողություններ:

Մասնագիտական գրականության, տեղեկատվական այլ աղբյուրների դիտարկումները, ինչպես նաև մարզում այս բնագավառում գործունեություն իրականացվող տնտեսավարողների հետ քննարկումները ցույց են տալիս, որ օգտագործման և սպասարկումների տեսանկյունից Շիրակի մարզում առավել նպատակահարմար է ոչ փակ, բացվող (բաց տեսակի) պաղեցման ագրեգատները: Աշխատանքում առաջարկվող կաթի սառեցման ագրեգատների ներդրման արդյու-

նավետությունը գնահատվել է YOM-S 3000 մակնիշի կաթի սառեցման ագրեգատի կիրառման օրինակով (հաշվարկի արդյունքները ներկայացված է 7-րդ աղյուսակում):

Աղյուսակ 7

FRESH MILK YOM-S 3000 ագրեգատի շահագործման ծախսերը տարվա կտրվածքով

№	**Ծախսերի անվանումը**	**Չափի միա-վորը**	**Օրական ծախսի նորման**	**Տարեկան ծախսը**	**Միավորի գինը, դրամ**	**Տարեկան դրամական ծախսը, հազ. դրամ**
1	Էլեկտրաէներգիայի ծախսը, այդ թվում՝	-	-	-	-	847.365
1.1	ցերեկային	ԿՎտ.ժամ	31.5* (4.5x7)	11497.5	41.85	481.170
1.2	գիշերային	ԿՎտ.ժամ	31.5*	11497.5	31.85	366.195
2	Ջրի ծախսը	$մ^3$	0.6	219	150	32.850
3	Լվացող միջոցների ծախսեր	կգ	1.2	438	300	131.400
4	Աշխատանքային ծախսումներ	մարդ.օր	2.0	730	3500	2555.0
5	Այլ ծախսեր	դրամ	300			109.5
	Ընդամենը ծախսեր					3676.115

* տեղակայանքի հզորությունը 4.5 ԿՎտ է, ծանրաբեռնված աշխատանքի ժամանակահատվածը գնահատվում է 7 ժամ ցերեկը և 7 ժամ գիշերը

Ագրեգատի ներդրումից կաթի ապրանքայնության մակարդակը չափավոր տարբերակում կազմում է շուրջ 65.0%, ներկայիս ապրանքայնության 52.9%-ի դիմաց: Այս պայմաններում ըստ հաշվարկների ապրանքային կաթի ծավալը մեկ ագրեգատի հաշվով ավելանում է 108.9 հազ. լիտր: Նշվածին համապատասխան լրացուցիչ հասույթը հաշվարկվել է 18.51 մլն դրամ, որի հաշվին ագրեգատի ձեռք բերման, մոնտաժման և շահագործման ծախսերը 1 տարվա ընթացքում կրկնակի փոխհատուցվում է: Գնահատվել է նաև կաթի ապրանքայնության մակարդակի բարձրացման արդյունքում լրացուցիչ եկամուտի հաշվին ծախսերի փոխհատուցման մակարդակը (լրացուցիչ եկամուտը մեկ ագրեգատի հաշվով կազմում է 6.1 մլն դրամ): Տվյալ դեպքում սառնարանային ագրեգատի ձեռք բերման, մոնտաժման և շահագործման ծախսերը 1.4 տարվա ընթացքում ամբողջությամբ փոխհատուցվում է:

Կաթի կթի կազմակերպման, կուտակման, պաղեցման կանոնների պատշաճ պահպանումը բավարար չէ կաթի իրացման արդյունավետությունն ապահովելու համար, այս գործընթացում կարևոր է համարվում կաթի փոխադրման կազմակերպումը՝ սահմանված պահանջներին համապատասխան: Հետևաբար աշխատանքում առաջարկվել է ուսումնասիրվող մարզի համար նախընտրելի փոխադրամիջոցներ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայաստանի Հանրապետությունում և Շիրակի մարզում կաթի արտադրության արդյունավետության բարձրացման խնդիրների բացահայտման և դրանց լուծման ուղիների առաջադրման ուղղությամբ իրականացված ուսումնասիրությունների արդյունքում հանգել ենք որոշակի եզրակացությունների, որոնք, հիմնականում, հետևյալն են.

1. ՈՒսումնասիրությունները ցույց են տալիս, որ կաթի իրացումն ապահովող կարողությունների՝ կաթի հավաքման և սառեցման տեղակայանքների սակավության, կաթ արտադրողների և վերամշակող ընկերությունների միջև պայմանագրային փոխհարաբերությունների թերզարգացածության, կաթ արտադրողներին միջնորդների, վերամշակողների կողմից գների պարտադրման երևույթի առկայության մասին: Գյուղացիական տնտեսությունների կողմից կաթի իրացման գնի նվազեցումը չի հանգեցրել կաթի մանրածախ գնի համարժեք նվազեցման:

2. Կատարված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ կաթի գների վրա ազդում են մի շարք գործոններ, որոնցից հիմնականները հետևյալն են՝ անասնապահությունում օգտագործվող ռեսուրսների գների փոփոխությունը, բնակչության եկամուտների մակարդակը, կերային մշակաբույսերի համար տվյալ տարվա բնակլիմայական պայմանների բարենպաստ և ոչ բարենպաստ լինելը, սեփական արտադրության և գնովի կերերի ծավալների հարաբերակցությունը, կաթ գնողիրացնող և այլ միջանկյալ օղակների (հավաքման կետեր, կոոպերատիվներ) բացակայությունը, չկանոնակարգված միջնորդ խավի առկայությունը, արտադրությունում կիրառվող արտադրական տեխնոլոգիաները, արտադրված արտադրանքի ինքնարժեքը, կաթ վերամշակող ընկերությունների առկայությունը և դրանց կողմից թողարկվող արտադրանքի ծավալները:

3. Իրականացված դիտարկումներն ու վերլուծությունները ցույց են տալիս, որ կաթնային անասնապահության խնդիրները բազմազան են, դրանք պայմանավորված են տարբեր գործոններով՝ սկսած կաթնային անասանապահությունում օգտագործվող ռեսուրսների ապահովումից, ներառյալ կերարտադրությունն ու կերապահովումը, բնական կերահանդակների օգտագործումը, կենդանիների տոհմային ու մթերատու հատկանիշների բարելավումը, արտադրության

գործընթացի կազմակերպումը, կաթի նախնական վերամշակումը և իրացման գործընթացի կազմակերպումը:

4. Շիրակի մարզի համար 2000-2013 թվականների համապատասխան տվյալների հիման կատարված էկոնոմետրիկ վերլուծությունների և հաշվարկների հիման վրա հանգել ենք հետևյալ հետևությունների: Համաձայն կառուցված ռեգրեսիոն մոդելի՝ ուսումնասիրվող տարիներին մեկ լիտր կաթի գնման գնի յուրաքանչյուր մեկ դրամով թանկացումը հանգեցրել է կաթի ապրանքայնության մակարդակի շուրջ 0.179%-ով կրճատմանը, իսկ կաթի համախառն արտադրանքի յուրաքանչյուր 1000 տոննայով ավելացման հետ զուգահեռ կաթի ապրանքայնության մակարդակը բարձրացել է 0.495%-ով: Մոդելում ընդգրկված գործոնների միջև առկա է միջին ուժգնությամբ կապ (R=0.555), իսկ կաթի ապրանքայնության մակարդակի տատանումների միայն 30.8%-ն է պայմանավորված մոդելում ընդգրկված գործոնների համատեղ տատանումներով, իսկ մնացած 69.2%-ը պայմանավորված է այլ և պատահական գործոններով:

5. Ուսումնասիրվող Շիրակի մարզում՝ ելակետ ունենալով կերարտադրության զարգացման միտումները (կանխատեսումները), գնահատվել է խոշոր և մանր եղջերավոր կենդանիների գլխաքանակը 2015-2020թթ. համար, որոնք հնարավոր է պահպանել կանխատեսվող կերարտադրության պայմաններում: Ըստ կատարված հաշվարկների 2020թ. խոշոր եղջերավոր կենդանիների գլխաքանակը կարող է գերազանցել 2014թ. հունվարի 1-ի ցուցանիշը 31.1, իսկ կովերինը՝ 34.4%-ով: Մանր եղջերավորների գլխաքանակը հնարավոր է ավելացնել 54.7%-ով:

6. Հաշվի առնելով կաթի արտադրության արդյունավետության բարձրացման համար կերաբաժնի կարևորությունը՝ առաջարկվել է կովերի նորմավորված կերաբաժնի նախընտրելի կառուցվածք: Դրա հետ միաժամանակ կաթի արտադրության արդյունավետության բարձրացման առանցքային գործոններից է համարվել բնական կերահանդակների լիարժեք և համակարգված օգտագործումը, անհրաժեշտ ծավալներով և որակական հատկանիշներով դաշտային կերարտադրության ապահովումը, կաթի հավաքման և պահպանման կարողությունների ձևավորումը, կաթի վերամշակման կարողությունների ստեղծումը, անասնաբուժական սպասարկման վիճակի բարելավումը, կենդանիների տոհմային հատկանիշների բարելավման ուղղությամբ աշխատանքների իրականացումը, մասնագիտացված խորհրդատվության ապահովումը և այլն:

7. Կաթի արտադրության արդյունավետության բարձրացման գործում առանձնակի կարևորվում է կաթի իրացման համակարգը: Վերջինից ելնելով աշխատանքում առաջարկվել է կաթի իրացման սխեմաներ: Շահագործման և սպասարկման առումով Շիրակի մարզի գյուղական համայնքների համար առաջարկվել է բաց տիպի սառեցման տեղակայանքների օգտագործումը: Կատարված հաշվարկները ցույց են տալիս, որ աշխատանքում առաջարկվող կաթի սառեցման ագրեգատների համար ձեռք բերման, մոնտաժման և շահագործման ծախսերը 1.4 տարվա ընթացքում ամբողջությամբ փոխհատուցվում է:

Ատենախոսության հիմնական դրույթները և ստացված արդյունքներն արտացոլված են հեղինակի հետևյալ գիտական աշխատություններում.

1. Աբրահամյան Ս.Վ., Կաթնամթերքի արտադրության միտումները ՀՀ-ում //Материалы Международной научной конференции “Проблемы использования и управления земельными ресурсами” Ереван, ГАУА, 2010.- стр. 55-57
2. Գրիգորյան Մ.Հ., Աբրահամյան Ս.Վ., Կաթի արտադրության արդյունավետության բարձրացման ուղիները ՀՀ Շիրակի մարզի օրինակով // Երևան, <<Ագրոգիտություն>> թիվ 5-6, 2013.- էջ 234-239
3. Tspnetsyan G.S., Abrahamyan S.V., The problems of dairy cattle breeding and its specific features in ra Shirak marz // Тбилиси Том.11 No.4, Известия Аграрной науки, 2013.- стр. 81-84
4. Абрамян С.В., Кормопроизводство как ключевой фактор развития молочного животноводства в Ширакской области республики Армения // Известия НАУА №1, Ереван, 2014.- стр. 116-120
5. Abrahamyan S.V., Quantitative assessmentn of factors influencing milk production in Shirak region of the republic of Armenia // Ереван, Известия НАУА №3, 2014.- p. 97-102
6. Ծպնեցյան Հ.Ս., Աբրահամյան Ս.Վ., Կերարտադրության զարգացման ուղիները ՀՀ Շիրակի մարզում // Материалы Международной научной конференции посвященной проблемам безопасности пищевых продуктов и продовольственной обеспеченности’’ Ереван, ГАУА, 2015.- стр. 119-216

АБРАМЯН СЮЗАННА ВАРДГЕСОВНА

ПРОБЛЕМЫ ПОВЫШЕНИЯ ЭФФЕКТИВНОСТИ ПРОИЗВОДСТВА МОЛОКА И ПУТИ ИХ РЕШЕНИЯ (НА ПРИМЕРЕ ШИРАКСКОГО МАРЗА РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ)

Автореферат диссертации на соискание ученой степени кандидата экономических наук по специальности 08.00.02 - "Экономика и управление хозяйством, его сферами"

Публичная защита диссертации состоится 23-го февраля 2016 года в 16^{00} часов на заседании Специализированного Совета 002 по экономике ВАК РА, действующего в Национальном аграрном университете Армении, по адресу: 0009, Ереван, ул. В.Теряна 74.

РЕЗЮМЕ

Актуальность исследуемой темы обусловлена задачами повышения эффективности производства одного из основных сельскохозяйственных продуктов – молока как главнейшего компонента продовольственной обеспеченности и разработка путей по их решению. Согласно средним показателям национального продовольственного баланса РА в 2011-2013гг. в расчете на душу населения объемы среднегодового потребления молока и молочных продуктов составили 232, 5 кг, в то время как физиологическая норма равна 392 кг. Важное место в числе продовольственных продуктов животного происхождения занимают молочные продукты. В структуре минимальной продовольственной корзины на их долю приходится 14 % энергозатрат и 54 % энергоресурсов животного происхождения.

В Армении значительная часть спроса на молоко и молочные продукты обеспечивается за счет импорта, в связи с чем главной проблемой является удовлетворение спроса молока и молочных продуктов за счет собственного производства. Подобная ситуация свидетельствует о том, что как в республике в целом, так и в Ширакском марзе, в вопросе увеличения объемов и эффективности производства молока существуют многочисленные проблемы, требующие всестороннего изучения, для выявления и решения которых необходимо разработать соответствующие меры. Вышесказанное обусловливает актуальность изучаемой темы и исходит из решения задач по развитию скотоводства и необходимости продовольственной обеспеченности страны.

Целью исследования является изучение молочного скотоводства Ширакского марза РА, выявление проблем повышения эффективности производства молока и разработка путей по их решению.

Для решения указанных целей поставлены следующие задачи:

- исследовать теоретические вопросы эффективности развития молочного скотоводства, состояния производства молока и тенденции развития в Республике Армения;

- исследовать состояние и особенности рынка молока Ширакского марза, оценить роль марза в производстве молока в республике;
- оценить влияние отдельных факторов на повышение эффективности производства молока;
- проанализировать состояние полевого кормопроизводства и наметить основные направления его развития;
- разработать основные направления повышения эффективности производства молока.

На основе всестороннего изучения состояния молочного скотоводства предложены пути решения задач по повышению эффективности производства молока. Основные научные результаты обусловлены проблемами, представленными в пределах исследования, в частности:

- оценены факторы, определяющие эффективность производства молока в Ширакском марзе и степень их влияния;
- разработаны основные направления развития кормопроизводства в Ширакском марзе, включая задачи использования семеноводства и семенного обеспечения кормовых культур, улучшения структуры посевных площадей, соблюдения агротехнических мероприятий, систематизированного использования кормовых угодий;
- разработаны основные направления повышения эффективности производства молока, обусловленные повышением продуктивности коров, организацией племенного дела, улучшением условий содержания скота;
- разработаны основные направления повышения уровня товарности и реализации молока, предложены механизмы его реализации и дана оценка эффективности их внедрения.

В первой главе работы изучены сущность эффективности молочного скотоводства, классификация влияющих на нее факторов, состояние и тенденции развития производства молока в республике, природно-климатические условия Ширакского марза РА, их роль в производстве молока, состояние рынка молока в республике и его особенности в изучаемом марзе.

Во второй главе рассмотрены проблемы молочного скотоводства и их особенности в Ширакском марзе РА, проблемы кормопроизводства, дана количественная оценка факторов, влияющих на производство молока на примере Ширакского марза.

В заключительной главе, исходя из результатов исследований, предложены основные пути решения проблем развития кормопроизводства, условий кормления, улучшения использования естественных сенокосов, увеличения товарности молока, его реализации, обусловливающие повышение эффективности производства молока.

SYUZANNA ABRAHAMYAN

THE PROBLEMS OF INCREASE OF MILK PRODUCTION EFFICIENCY AND WAYS OF THEIR SOLUTION (ON THE EXAMPLE OF SHIRAK MARZ OF THE REPUBLIC OF ARMENIA)

The abstract of the thesis for receiving the degree of Doctor of Economics in the specialty: 08.00.02 – "Economics and Management of the Economy, its Spheres"

The defense of the thesis will take place on 23 of February 2016, at 16^{00} o'clock at the Meeting of 002 specialized Council of National Agrarian University of Armenia, 74 Teryan street, Yerevan, 0009

SUMMARY

The relevance of the studied subject is conditioned by the problems of increasing the efficiency of production of one of the main agricultural products – milk, as main component of food security, and also identification of the ways of their solutions. According to average values of national food balance of RA 2011-2013, annual consumption of dairy milk volumes per capita is 232.5 kg when the physiological norm is 392 kg. The use of dairy food in products of animal origin takes a key place. About 14% of the energy consumption and 54% of energy resources of animal origin accounts for it in the minimum food basket.

The significant part of the demand for milk and dairy products is provided through imports in the Republic. It is obvious that meeting the demands of milk and dairy products at the expense of own production is a problem of utmost importance.

The current situation testifies that there are numerous unsolved problems in the sphere of increasing the volumes and efficiency of milk production both in the Republic and in Shirak Marz of RA, the identification of which and recommendation of their solution requires comprehensive study of the situation in the spheres of milk production realization, consumption, etc. In the result of this study it is necessary to develop measures for the increase of volumes and production efficiency of milk. The aforesaid caused the relevance of the studied subject and proceeds from the necessity of the solution of the development of cattle breeding and food security of the country.

The research objective is the identification of the problems of increasing the efficiency of milk production and recommendation of the ways of their solutions based on the study of the situation of dairy cattle breeding in the Republic and the studied Shirak Marz.

The following problems were addressed to reach the mentioned objective:

- to study the theoretical problems of the efficiency of dairy cattle breeding, the state of milk production and development trends in the Republic of Armenia;

- to study the state and characteristics of milk market of the RA Shirak Marz, assess the role of the marz in the field of milk production;
- to assess the influence of certain factors of increasing the efficiency of milk production;
- to analyze the state of field forage production and outline the mains ways of the development;
- to develop the main trends of increasing the efficiency of milk production.

The ways of solution of the problems of increasing the efficiency of milk production based on the comprehensive study of the state of dairy cattle breeding in the Republic and the studied marz. The main scientific results are conditioned by the problems arisen in the framework of the study, particularly:

- the factors influencing milk production in the RA Shirak Marz and the extent of their impact were assessed;
- the main ways of development of forage production in the RA Shirak Marz were developed including the problems of seed breeding and security of forage crops, improvement of the structure, preservation of agrotechnical measures, coordinated use of natural pastures;
- the main ways of increasing the efficiency of milk production were developed conditioned particularly by increasing cow productivity, their feeding, organization of pedigree farming, improvement of keeping conditions;
- the main directions of increasing the level of marketability and selling of milk were developed, schemes of milk sale, estimating the efficiency of introduction of collecting units, were offered.

The first chapter of the paper studied the essence of the efficiency of dairy cattle breeding, classification of the factors influencing it, the conditions and tendencies of milk production in the Republic, natural economic conditions of the RA Shirak Marz, their role and characteristic features in the sphere of milk production, the state and peculiarities of milk market in the studied marz. The second chapter discussed the problems in dairy cattle breeding and its peculiarities in Shirak Marz, problems of forage production conditioning the increase in the efficiency of milk production, and the quantitative assessment of the factors influencing milk production on the example of the Shirak Marz. The concluding chapter, considering the results of the studies, suggests the main directions of the solutions of problems in the development of forage production, pedigree farming, feeding conditions, improvement of the use of natural forage lands, increasing in milk marketability and milk selling.

The results of the thesis have theoretical and practical significance, in particular, in the solution of such problems which concern the solution of problems of the increase in the production efficiency of the major livestock product – milk, and also increase of efficiency of the branch of cattle breeding and food security of the country.